մի-մի առանձին համբարութիւն: Կերպասի վաճառականները ունին իրենց համքարութիւնը, երկաթավաճառները՝ իրենցը. նոյնը նաեւ մրգավաճառները եւայլն: Այդ համքարութիւնները մի որոշ չափով կազմակերպուած են նաեւ ըստ ազգութիւնների: Վրացի, ռուս եւ հայ արհեստաւորները ունին իրենց ընդհանուր համքարութիւնները, իսկ թաթարները՝ իրենցը: Մինչ ռուս վաճառականները Ռուսաստանի հետ են կապուած, իսկ գերման վաճառականները Թիֆլիսի համքարութեան մէջ չեն մտած առհասարակ, գերման*) կօշկակարները, ընդհակառակը, ընդունուած են հայ-վրացական համքարութեան մէջ»:

Միայն վարպետնե՛ր իրաւունք են ունեցել համքարութեան անդամ դառնալու, բայց ոչ՝ քարգահները (օգնականները) եւ աշկերտները:

Այստեղ Հաքստհաուզէն մանրամասնութիւններ է առաջ բերում Թիֆլիսի համքարութեանց սովորոյթների, տնտեսական պայմանների մասին եւայլն, որոնք ինքնին շատ հետաքրքրական են, բայց որոնց վրայ այստեղ աւելի հանդամանօրէն կանգ առնել չենք կարող դժբախտաբար:

Անդրկովկասի թաթարների ընկերային կազմի մասին եւս բաւական մանրամասն տեղեկութիւններ է տալիս Հաքստհաուզէն:

Այսչափը ամփոփենք այստեղ նրա ասածներից, որ թաթարները եւս ունեցել են իրենց «բնիկ ազնուականութիւնը», ծանօթ՝ բէկ անունով: «Գրեթէ ամէն մի գիւղ ունի իր բէկական ընտանիքը» (Ա. 163): Բայց, թաթարները չեն ճանաչել ճորտատիրութիւն (Ա. 252):

Ինչ վերաբերում է հայ-թարարական եւ առհասարակ անդրկ. ժողովուրդների յարաբերութիւններին, Հաքստհաուզէն նկատում է (Ա. 244).—

«Կովկասում գոյութիւն չունի թշնամութիւն մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ, նաեւ ոչ՝ տարբեր ցեղերի — թաթարների, չէրքէզների, պարսիկների միջեւ որպէս մահմեդականների եւ վրացիների, հայերի միջեւ՝ որպէս քրիստոնեաների: Նրանք յաճախ ապրում են միեւնոյն գիւղում կողք-կողքի, իրար հետ պահպանում են բարի դրացիութիւն ու բարեկամական կապ, ուտում են միասին՝ միեւնոյն գորգի վրայ նստած: Եւ սակայն ամէնքն էլ պիղծ են բռնում իրենց կրօնը, սովորոյթները, բարքերը եւ տարազը: Ուր որ աղանդներ կան քով-քովի, այսինքն՝ չիա եւ սուննի մահմեդականներ եւ կամ հայ-լուսաւորչականներ ու հայ-կաթոլիկներ, այնտեղ էլ գոյութիւն ունի թշնամութիւն: Բոլոր ժողովուրդները խուսափում են իրեաների՛ հետ բարեկամական կապ պահպանելուց»:

Գալով վրացիների ընկերային կազմին, այդ խնդիրն եւս մանրամասնօրէն շօշափուած է Հաքստհաուզէնի աշխատութեան մէջ:

Վերը ասուածներից պարզուեցին մի քանի գծեր: Առաջ բերենք եւ Հաքստհաուզէնի ամփոփող այս խօսքերը.

«Վրացական ցեղի օրգանական բաժանումը եւ ողջ կազմը իր սկզբունքներով ու հիմքերով մեծ նմանութիւններ ունի գերմանականին հետ: Դա աւատական կազմակերպութիւն է, բոլորովին համանման՝ գերման-ռոմանականին: Վրացական ազնուականութիւնը զուտ աւատական ազնուականութիւն էր, որով նա թագաւորի մէջ տեսնում էր իր վերին աւատապետին, իսկ ստորադաս ազնուականներն էլ յանձին գերադասների՝ իրենց աւատապետներին»:

Այս ամէնի, ինչպէս նաեւ առհասարակ Կովկասի ներքին կեանքի մասին շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Հաքստհաուզէն, բայց զանց եմ անում այդ ամէնը, մեր նիւթի շրջանակից դուրս դիտելով:

* * *

Քանի որ հայերի հարեւանների մասին համառօտակի խօսք եղաւ, մի քանի բառ էլ՝ ռուսների եւ ռուս վարչութեան շուրջը՝ անդրկովկասեան իրականութեան մէջ:

Յայտնի է արդէն, թէ մասնաւորապէս հայերը ի՛նչպէս են ընդառաջել ռուսների առաջխաղացմանը Կովկասում եւ թէ՝ ի՛նչ չափերով են նպաստել յաջողութեանը: Ներսէս Աշտարակեցու կատարած դերը այդ ուղղութեամբ՝ հանրածանօթ է արդէն:

*) Դրանց գլխաւորն է եղել Peter Neu, ուրիշ անունով Շեհերզադէ, որ բազմաթիւ լեղուներ գիտէր ու Հ-ին շատ բանում է օգնել, ուղեկցելով նրան: